



40 փ3.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

40 փ3.

Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Երգիծաբանական

ՏՆՕՐԷՆ ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՕՔՄԵՃԵԱՆ

Հասցէ, Ղալաթիա Նորատունկեան խան

ԺԲ. Տարի Թիւ 41

ՇԱԲԱԹ

17 Ապրիլ, 1899

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ.—Օրուան վիճակաւորները:
Յ. Ս. ԿԱՄԱՐԱՆ.—Կեսարիայէն նամակ:
Վ. Փ. ԶԱՐԴԱՆ.—Գրչի զբօսանքներ:
ՄԱՆՏԵՍԻ ՀԱՃԻ ԴԱՆԻԿ.—Մեծ Նիստ մը ի Միխայ:
ՄԷՆՅԻՅԻ.—Ձատիկ—Որո՞ւն հաւատալ:
ՍԱՐԳԻՍ ՓԱՎԱԶԵԱՆ.—Կէտիկ Ժաշայի եկեղեցւոյն մէջ,
ՅԱԿՈԲ ՏԷՐ ՅԱՆՈՒՆԱՆ.—Նորածնութիւնը Օայր եկե-
ղեցիին մէջ:
Վ. Փ.—Ի՞նչ ման գիշեր:
ԵԴՈՒԱՐԴ.—Ի՞նչ տեր կ'անցնին կը դառնան Մաքրի-
գիւղի մէջ:
ՄԵՐԱՆՈՒՐ.—Շատ քիչ կը գտնուին:
ԼԱՄԱՆԱՅԻ ՄԵՐԱՆՈՒՆՆԻ ՄԻ.—Վաճառուի մը
կը փնտռուի:
ԶԷԼԵՆԻՍ.—Էտահաւաճիները.—Ինքնակոյժ:
Վ. Փ.—Մոմով կը փնտռուի:
* * * .—Ղմոյ մը հին մահազդի (որ նոր է):
Խ.—Հարց-պատասխան: Ծաղիկի հեռագիրները: Ազ-
գային լուրեր:

ՕՐՈՐԱՆ ՎՐՃԱԿԱՐՈՐՆԵՐԸ

Ամառիոյ առաջնորդական թեմը՝ երբեմն նա-
խընտրելի վիճակ մըն էր, և կը տարածուէր մին-
չեւ Եւրոպիոյ սահմանները և Սամոսի ծովեզեր-
քը, Մարդուանի Ս. Աստուածածնայ վանքն ալ իր
մէջ ունենալով:

Սերովրեան Յակոբոս Պատրիարք 30 տարինե-
րու մօտ վարած է այդ կողմի Առաջնորդութիւնը:
Սամաթիացի Դէորդ եպիսկոպոսը՝ 20 տարիներէ
աւելի պաշտօնավարած է, և Մարդուանու վանքին
շուրջը խողարածութիւն ընելուն համար՝ ժամա-
նակին խափա ըննադատուած է Մանգումէի մի-
ջոցաւ:

Եղեռեան Յովհաննէս եպիսկոպոս 17—18
տարիներ չարչարուեցաւ այդ վիճակին ժողովը-

դեան անդերջանալի դժգոհանքներէն:

Արզումանեան Սաեփան, Կիրոյեան Խորէն,
Խօլտամեան Պօղոս, Այվազեան Եղիշէ, և վերջա-
պէս, Փրանկիւկեան Նիկողայոս վարդապետները՝
յաջորդաբար այդ վիճակին տէր և հովիւ կար-
գուելով, չի կրցնի դոհացնել վիճակային ժողո-
վուրդը. այժմ Ազգ. Կեդր. Վարչութիւնը, Վանք-
եան Տ. Արիստակէս Ծ. վարդապետը յարմար դա-
տած է զրկել, նկատելով որ այս վարդապետը ուր
որ զրկուած է, Կուտինա թէ Պիլէճիկ, Պանարմա
թէ Պալքէսէր, Նիկոմիդիա թէ Նիկիա, իր հաշտ
քաղաքականութեամբը, և թէ հեռանկատ կենցա-
ղադիրութեամբը կարող է դոհացնել ամէն դա-
տակարգի ժողովուրդը:

Սակայն ըստ մեզ, նկատելով որ Տ. Արիստա-
կէս Ծ. վարդապետ Վանքեան, երբ Շապին-Դա-
րահիսարի համար ընտրուեցաւ՝ ու չի զրկուեցաւ,
Կիւրին-Մանգլըք-Տէրէնտէի համար՝ որոշուեցաւ՝
յետաճողուեցաւ, Եօղդաւի համար յայտարարուե-
ցաւ, կէս ճամբան մնաց՝ 1894ին, Ամեն. Տ. Խորէն
Պատրիարքի օրով՝ Ամասիա երթալ հրամայուե-
ցաւ, ու չեզեալ համարուեցաւ, ուստի Վանքեան
վարդապետ իրաւունք ունի հարցնելու թէ՛ ի՞նչ ե-
րաշխաւորութիւն կայ թէ այս անգամ ալ Ամասիոյ
վիճակին համար միեւնոյն տարածներէն մէկուն
չպիտի հանդիպի, քանի որ Ամասիայիք՝ առաջնորդ-
կը խնդրեն, և ո՛չ տեղապահ:

* * *

Քղի՝ բաւական ժամանակ երբեքալ և տա-
տանեալ կացութիւն մը ունեցաւ և վերջապէս

տեղեւոյն առաջնորդական Տեղապահ Տ. Արիստակէս վարդապետ խաչատուրեանը՝ խօշմաթեանի մը քմահաճոյքին զոհ գնաց, և իրեն կը յաջորդէ այժմ Դպրեմանքի սաներէն Հայր Վահրիճ վարդապետ Շահլամեանը:

Քղին՝ Ներսէս վարդապետի պաշտօնավարութենէն ի վեր կը ճանչնամ: Աստուած կարողութիւն տայ նորընտիրին:

* * *

Ակնայ վիճակը, որ վերջերս միացուած էր Արարիկի թեմադպրութեան, խառն ժողովի որոշմամբ վերստին առանձին առաջնորդութեան վերածուեցաւ և որուն առաջն. տեղապահ կարգուեցաւ Քղի լեքալ հոգեւոր հովիւը:

Պատրիարքարանի թեմական վիճակացոյցին մէջ, Ակն՝ առաջնորդական առաջին վիճակ արձանագրուած է: Ձեռք գիտեր թէ՛ սոյն առաջնութիւնը ո՞րքէ առած է իր ծագումը: Ակն բառը՝ այր սկզբնատառով սկսուած ըլլալուն, թէ հին Ամիրայից ծննդավայրը նկատուելուն: Յորեկեան՝ երկար ատեն Յոր երանելոյն պէս ճգնեց Ակնայ մէջ, և Սրուանձտեանց՝ լոկ անուանական կերպով վարեց իր պաշտօնը, երբ ինքը Բաղէշ կը մնար դործով, և Ակնայ առաջնորդը կ'ստորագրէր միշտ:

* * *

Եւ վերջապէս, ընտրելեաց եռանուն ցանկ մըն ալ ղրկուած է Նգիպտոս:

Այս ցանկը՝ ուղղակի կամ անուղղակի ձեւով ղրկուած է կ'ըսեն, ուրկէ պատգոնապէս տեղեկութիւն չունի կ'ըսուի խառն ժողովը:

Այդ ցանկին մէջ կը գտնուին.

Տ. Հմայեակ եպիսկ. Դիմաքսեան:

Տ. Յակոբ-Աշոտ եպիսկոպոս Փափագեան:

Տ. Յովսէփ Ծ. վարդապետ Այվաղեան:

Այս վերջնոյն տեղ՝ որ մօտերս Ռոտտոթոյի վիճակին վրայ եպիսկոպոս պիտի ձեռնադրուի, ինչո՞ւ նշանակուած չըլլար ցանկին մէջ Ճէվանիւր-ճեան Տ. Դաբրիէլ եպիսկոպոսի անունը որ 23 տարի առաջ բուն Նգիպտոսի վրայ ձեռնադրուած և Գերմանիկեան հոգեւոր Դաբրիէլ Սրբազանի առումով մկրտուած էր:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

Հետեւեալ նամակը ստացած ենք զոր անկողմնակալութեամբ կը հրատարակենք.

Մեծ. Տէ՛ր,

Պատ. Շաբաթաթերթիդ ներկայ տարւոյ Մարտ 22ի 38 թիւին Ազգ. Լրոց բաժնին մէջ ցաւ ի սիրտ կարգացի իմ մասին գրուած անտեղի տողերը՝ յորում զիս փոքրէք անուանելէ զինի, կը յաւելուք թէ (Պատրիարքարանը գրած է Կեսարիոյ Առաջնորդին, որպէս զի սիրաշահի զայն խաբէր համար):

Քաջ գիտեմ որ փոքրէք բառը «ճշմարտապատում» Բեւառիէնէն փոխ առած է Պատ. Խմբագրութիւնդ. արդէն յիշեալ թերթի անիրաւ յարձակման դէմ բողոքած եմ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, և այլ բազում եկեղեցական ու աշխարհական պաշտօնական անձնաւորութեանց, եւ նոյն խկ ըստ օրինի հերքմագրեր ղրկած եմ թէ՛ Քէչեան Էֆէնտիի եւ թէ՛ այլ խմբագրապետաց ոմանց:

Ներկայիս Մեծ. Տէ՛ր, կը խնդրեմ որ խաբէր համար խօսքն ալ բարեհաճիք դուք պակսեցնել ինչ եղանակաւ որ կ'ուզէք: Պատրիարքարանը գիտէ զմեզ թէ՛ պատժել, եւ թէ՛ վարձատրել ի պահանջել հարկին, եւ բընաւ մէկու մը չհարցնելու: Անշուշտ անիրաւութիւն է անմեղ մէկը տկար գտնելով ըստ հաճոյս նախատել ուրիշին հաճոյք պատճառելու համար, եւ բան մը որ անշուշտ անհաճոյ լը թուի Ձեզ: Խնդրելով որ զներկայս հրատարակէք առ ի բուժումն գայթակղեալ մտաց, եւ մատուցանելով կանխաւ շնորհակալիքս:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԽԱԳ ՍՐԿ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Կեսարիա 6 Ապրիլ 1899

ԳՐԱԴ ԶՔՕՍԱՆՔՆԵՐ

ԲԱՐՈՒԱԿԱՆԻ ԿԵՂԾ ԴԻՄԱԿԸ

Ինչ ալ աղւոր կը վայէ կոր սա զիմակը, բնաւ յայտնի չընեմ այն փոփոխութիւնը որ. գէմբերու վրայ կ'երեւի, եւ զարմանալի՝ որքան ալ զիմացկուն է. անձրեւը, արեւը, ձիւնը, հովը եւ փուքը ոչ մէկը ազդեցութիւն կ'ընեն զիմակին վրայ, չը պատուիր անի եւ ոչ ալ կը կտորի, գիմացկուն է եւ տարիներով կեանք ունի սակայն օր մը պզտիկ հովէ մը պիտի պատուի:

* * *

Ինչ աղւոր վայեր է, տես սա պարոնին երեսին, Բարեկենդանի դիմակները ամէնքն ալ յայտնի կ'ընեն մարդոց ով ըլլալը, բայց այս դիմակին տալ մեր ճանչցած ստորին, գձուձ մուլթիւններով բեռնաւորուած անձը բոլորովին փոխուած է, բարոյակոյնի կատարեալ տիպար մըն է, աղքատաւոր, Աստուածավախ եւ միայն քու մտերիմ բարեկամդ է:

Սակայն զիմակը գունափոխութիւն ունի, կը նայիս օր մը իր գոյնը փոխած է փոխանակ քու մտերիմդ ըլ-

լալու քանի մը օրերու համար իմս կը դառնայ, է՛ ատալ բան մը չէ, ատոնք մասնակի ձեւափոխումներ են, հիմակուան փոփոխումը օր մը պիտի ըլլայ եւ այն օրը զիմակը բոլորովին պիտի սլատուի, եւ երեւան պիտի գայ զիմակին տակը ծածկուած ստորին, անպատիւ եւ գժուձ էտիլը:

* *

Բարոյականի կեղծ զիմակներ կրող շատեր կան մեր մէջ, եթէ չվախնայի դատարեւելու վտանգէն, պիտի ըսէի կատարեալ համարձակութիւնով թէ մեծաւ մասամբ մե՛ք զիմակ կը գործածենք:

Կան որ անուս եւ սգէտ են եւ կը կրեն ուսնալի զիմակ:

Ուրիշներ անբարոյական եւ մոլի՝ կը կրեն բարոյականի զիմակը եւ բարոյախօսի հովեր կ'առնեն:

Անդին ուրիշներ՝ որոնց զիտցածը ոչինչ է, կատարեալ գիտուններ կը դառնան:

Մարդատեսներ, մարդասէրի պիմակը կը կրեն իրենց դէմքին վրայ:

Անխղճներ ու քարսիրտ մարդիկ՝ խղճահար եւ Աստուածավախ կը դառնան:

Աղղին քանի մը զրուշի զոհողութիւններ ընողները բարերարի զիմակը կ'առնեն:

Իրենց անձնական շահուն համար մէկ երկու այրիներու օղնեղները, սաշտպան որբոց եւ այլեաց կը դառնան:

Ուսումնական ինքնուրոյշ վաւերացեալ ուսուցիչները բրօֆէսօր կը դառնան:

Ձայնը ձունը չհանող, երեկոյթներու մէջ պարկեշտութեան տիպար կարծուած գիմակին տակը, ահռելի մոլի ու սրիկայ մը պահուըտած է:

Բարոյական ունի ու շատ պարկեշտ է ինք չի նըմանիր ուրիշ կանանց որոնք անբարոյական են, այն ալ ամէնէն աւելի տղան մէջ թաթխուածն է:

«Ես աշխատող եմ, ես աշխատութիւնը կը սիրեմ, ծոյլ չեմ» ըսողին տակը կը ծածկուի ծոյլ ու ասուշ մարդ մը:

«Ազգաստասէր ու մարդասէր եմ» ըսողին մէջ կ'ամփոփուի, ազգաստներուն արինը ծծողի մը ամբողջ կեանքը:

.

Ու օր մը այս զիմակները ամէնքն ալ իրենց գունափոխումները հետզհետէ ունենալով օր մըն ալ կը տեսնես որ զիմակը կ'իյնայ ու կը պատուտի եւ երեւան կուգայ մարդը իր ամբողջութեամբը, եւ այն ատեն պիտի տեսնես որ մտերմիդ, պատուաւորդ, բարեպաշտը եւ բարերարը ամէնքն ալ զիմակներ են եղեր եւ կեղծիք:

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԱՆ

ՄԵԾ ՆԻՍՏ ՄԸ Ի ՄԻԻԱԼ

Զ Ա Ի Ե Շ Տ Բ.

ԱՐԱՌ ՈՒԱԾ Դ.

Եւրոպական ամէն ազգեր իրենց զաւեշտաթերթերը ունեցած են, ուր կը ներկայացնեն ժողովրդեան բարքերու ծիծաղաշարժ կողմերը՝ շատ անգամներ պատկերազարդ, որ իր ազդեցութիւնը ունի, սովորութիւնները բարքերը ազնուայնելով, աւելի բարձր մակարդակի մը վրայ դնելու գերին մէջ:

Ոյս պարագան լաւ ըմբռնած ըլլալով այդ ազգերը իրենց բարոյական եւ նիւթական աջակցութիւնը չեն խնայեր քաջալերելու համար զանոնք, եւ մտաւորապէս կամ մանաւանդ իմացական եւ զարգացման տեսակէտով մեր ժողովուրդէն անհամեմատ կերպիւ յառաջացած ըլլալով, այդ տեսակ թերթերումէջ արտայայտուած ո՛ր եւ է զաւեշտ ըլլայ ազգային կամ քաղաքական, սաղարեամբ կամ մանաւանդ հաճոյքով կարդացուելէ վերջը բնաւ իրարանցում կամ յուզում չպատճառեր անոնց: Այս խորհրդակցութեանց տեղի տուած են մէկ քանի Մաքրիգիւղի ազգայիներ որոնք՝ «Մահտէսի Հաճի Դանիկ» ստորագրութեամբ, անցեալ չարաթ՝ օրուան Ծաւէի մէջ հրատարակուած յօդուածէն զգածուելով, այնպիսի ծիծաղաշարժ միջոցներու զիմած են՝ որոնց նըկարագրութիւնը հաճոյքով պիտի լսեն Ծաւէի ընթերցողները:

Այդ անձերը՝ որոնք խնամքով եւ մեծ զգուշութեամբ սէտք եղած պատիւը կ'ընեն Ադամ Եւայական դարաւոր գաղափարներու, մտածելու անձնուիրութիւնը կ'ունենան թէ՛ ընդհանուր տիեզերագրութեան մէջ, Հաճի Դանիկ անունը մէկ հատ մը միայն կրնայ գոյութիւն ունենալ, ուստի մէկ մարմին մէկ հոգի եղած Ֆրաֆրսեան, Վալիվալեան, Մըլաւեան, Հառահառեան, Եւալուտեան եւ Շաալաւեան էֆէնտիները, նիստ գուժարելով ի Միխալ, երկար բանակցութիւններէ, խորհրդակցութիւններէ, եւ մասսիքայի, տիւզի, սիռայի գաւաթներու մեծաշառաջ զիմառնութիւններէ վերջը կ'որոշեն Հաճի Դանիկը ատեն Կրաւիրել:

Եւ այնպէս ալ կ'ըլլայ:

Հաճի Դանիկ պարկեշտ զօպաճի մըն է, հայր երկու սիրուն զաւակներու, իր իւղին մէջ տապկուող մը՝ որուն միակ մտածումն է իր օրասպահիլը հայթայթել, եւ միակ սկզբունքը՝ բնաւ մէկու մը անհաճոյ չըլլալ:

Հինգ վայրկեան վերջ Հաճի Դանիկ ներս կը մտնէ Մլաւեան էֆ. (խօսք առնելով) անունիկ ինչ է Հաճի Դանիկ:

— «Հաճի Դանիկ»:

— Ֆրաֆրսեան (ճարտար փութկոտութեամբ մը), սիրա մը կ'առնէք այնպէս չէ՞:

— Հաճի Դանիկ (որ այսպիսի առիթները ձեռքէ բնաւ չի փախչներ, մանաւանդ հոգին կուտայ երբ գա-

ւաթ մը պիտային քէլէ՛ մըն ալ կռավիէնայ ընկերա-
ցած ըլլայ)։

—Ան ձեր աղնուութիւնն է էֆէնտիմ։

—«Կառսօն»։

—«Օռիստէ»։

—«Էնա պիտէս աքօմա»։

—«Սմէսօն»։

Վալվալեան (շարունակելով) երէկուան Ծաղիկին
մէջ դո՛ւն գրած էիր ան յօդուածը . . .

—Հաճի Դանիկ (նայի եւ առաջ խոհեմութեամբ
տիտան ամբողջութեամբ սրարպելէ, վրայէն կռավիէրան
կ'ըլլելէ եւ պիտէրն ալ լաւ մը սրբելէ վերջը)։

—Չէ՛ էֆէնտիմ, նասը՛լ յօդուած, ես պան գրած չեմ։

—Յրսփրսեան, նասը՛լ, քու գրածդ չէ՞ մի, որու
պիտի հասկցնես . . .

—Հաճի Դանիկ, է՛յ չէ էֆէնտիմ, իմ գրածս չէ
վէսսելա՛մ։

—Եավուտեան, Տէր ողորմես նասըլ քուկդ չէ,
քու ստորագրութիւնդ ի՞նչ բան ունէր յօդուածին
տակ . . .

—Հաճի Դանիկ, ճանըմ նասըլ յօդուած, ես ա-
նանկ բան մը չեմ կրնար գրել, լաքին շատ թածիւս
կ'ընեմ քի, իլլէ խտտա կ'ընէք քի-դուն գրած ես տէյի,
ասիկայ խելքի մօտ բան է . . .

—Շատլաւեան, է՛յ շատ լաւ, քանի որ քուկդ չէ,
հերքէ էֆէնտիմ։

—Հաճի Դանիկ, նասըլ հերքեմ, ճանըմ, գիր չեմ
կրնար գրել կ'ընեմ կոր, էֆէնտիմ։

—Եավուտեան, (կրակ կտրած եւ բարկութեան
փրփուրներ ժայթքելով, ձեռքը ուժգին սեղանին մար-
մարիոնին զարնելով) ի՞նչ ըսել է աղբա՛ր, քու ստորա-
գրութիւնդ ի՞նչպէս ուրիշը կրնայ գործածել, ըսել է
որ քուկդ է . . . ըսել է որ դուն գրեցիր . . . ըսել է որ
դուն . . .

—Յրսփրսեան (ընդմիջելով) Եավուտեան էֆէնտի,
բարկանալու բան մը չիկայ, հելէ մէկ մէկ հատ եւս
պիտայ խմնք տէ . . .

—Է՛ կառսօն։

—«Օռիստէ»։

—«Էքսի պիտէս աքօմա»։

Կառսօնը (մեծ փութկոտութեամբ) «ամէսօն»։

—Հրամեցէք Հաճի Դանիկ։

—Հաճի Դանիկ (ի տես ոսկեփայլ պիտայի փրփը-
րագէզ վէտվէտումին նոյն խակ պահ մը այն աստիճան
կը կակուղնայ որ կ'որոշէ այո՛ ըսել, բայց նոյն միջո-
ցին, Շատլաւեան ընդմիջելով)։

—Է՛յ շատ լաւ, քանի որ դուք գրած չէք, եւ քանի
որ գիր գրել չէք գիտեր, եւ քանի որ չէք ուզեր ուրիշ
մէկը ձեր ստորագրութիւնը շահագործէ, մենք հերքում
մը կը գրենք, դուն խմբագրութեան տար։

—Խմբակը միաբերան, է՛յ սլաւօ՛ Մ. Շատլաւեան,
սլաւօ՛ ասոր ըսելիք չի կայ,

Հաճի Դանիկ, (մտածելով որ խմբագրութեան երթալ

գալ եւ այլն եւ այլն կրնան շտտ մը ծախքեր բանալ, ո-
րոնց մասնակցելու տրամադրութիւն ցոյց չի տար բը-
նաւ պիտէն խմբակը, ինք ալ իր կարգին բարկանալ ձե-
ւացնելով)։

—Էֆէնտիմ, վախիթս անցաւ, էրթամ պիտի, ես խը-
մարկութիւն մմարկութիւն չեմ գիտեր, ես բան չգրեցի,
եւ անանկ բանի չեմ խառնուիր վեոսելամ, հասկցա՛ք,
հասկցաք, իշթէ պու։

—Եավուտեան (գրգռուած, ճաթելու աստիճան
բարկացած) հերքե՛ս պիտի։

—Չպիտի հերքեմ։

—Հերքես պիտի,

—Չպիտի հերքեմ։

—(Յրսփրսեան բան մը կը փսփսայ Եավուտեանի
ականջէն, որուն վրայ Եավուտեան, այո՛ եո ալ անկէ
կը կատկածիմ ա՛մմա՛ . . .

—Հառհառեան, չէ՛ ճանըմ ան չէ՛, պարտալ խօսք,
Եավուտեան, էֆէնտիմ պարտալ փնտռես նէ՛ ան
է . . . ամա . . .

Հաճի Դանիկ (ուրախութենէն խելքը գլխէն գա-
ցած, եւ առանց գիտնալու թէ որո՞ւ համար է) ան է
էֆէնտիմ, ան ըլլալու է . . .

—Ան է էֆէնտիմ . . .

—Ան չէ ճանըմ . . .

Այս միջոցին երբ վիճաբանութիւնները գարեջուրի
գաւաթներու գումարի սխնակին հետ սկսած էին ա-
րարական եղէգներու սլէս երկնալ, գաղինօին տէրը,
վիթխարի օգապարիկ մը, սկսաւ բարձրաձայն պօռալ։

—Է՛յ աղալա՛ր, վաքըթ կէչիյօր, կիթմէ՛զմիսինիդ
տա՛հա։

Այս բացաղանջութեանը վրայ բարի խմբակը, ստի-
պուեցաւ նիստը դադարեցնել առժամաբար, որոշելով յա-
ռաջիկայ նիստին օրակարգի առջի խնդիրը ընել, «խոր-
հըրդակցութիւն մը բուն Հաճի Դանիկը գտնելու հա-
մար» (*)

ՄԱՀՏԵՍԻ ՀԱՃԻ ԴԱՆԻԿ

(*) Ծ. Խ. Պէտք է ուշադրութիւն ընել ստորո-
գրութեան՝ եւ ՄԱՀՏԵՍԻ ՀԱՃԻ ԴԱՆԻԿ փնտռել եւ ոչ
թէ միայն ՀԱՃԻ ԴԱՆԻԿ։

ՏՊԱՐԱՆ Կ. ՊԻՊԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Զիւլայիլլի խան թիւ 18

Տպագրական ամէն տեսակ գործեր փութով
և խնամքով կը կատարուին։ Չափաւոր գին։

Դաւառներէ յանճարարութիւնք պէտք է
ուղղուին թերթիւ Տնօրէնութեան։

Ձ Ա Տ Ի Կ

ՈՐՈՒՆ ՀԱՌԱՏԱԼ

ԲԱՐԻ ՀԱՌԱՏԱՑՈՂԸ

Վերջապէս հասաւ Ձասիկը մեզի,
 Ձասիկն յարութեան Տեառն Յիսուսի:
 Փառք Տեառն Աստուծոյ որ յեւ մեծ պահոց
 Մեզ արժանացուց իր վսեմ գործոց:
 Ո՛հ, ի՛նչ ալ մեծ է, կարծես չունի չափ
 Մեր Տէր Յիսուսին ո՛հ, կեանքը որչա՛փ:
 Եւ խառնուին օր, օրէ՛ր շարունակ
 Կերայ աղ ու հաց, սե՛ւ հացը ցամա՛փ
 Ձասիկն կ'սպասեմ որ ես վերսին
 Արժանի ըլլամ մարմնոյն ես նորին:
 Շնորհակա՛լ եմ, քեզիմէն, ո՛վ Տէր,
 Որ այս սարի ալ Ձասիկ ես բերե՛ր:
 Բարի քրիստոնեայն կերբայ դէպ ի հո՛ն,
 Հո՛ն, եկեղեցին կը կասարէ՛ր սօն:
 Շարականները Ձասիկն փառաւոր
 Ձայնեն դպիրներն եղանակաւոր,
 Եւ հոգին վսեմ բարձրանայ, յուզուի
 Մարմինն երբ ի՛նքն ալ հրեօտանք մը չունի:
 Յարութեանդ շնորհիւ, ո՛վ Տէր, դո՛ւն հիմա
 Իմ հոգիս մաքրէ՛, մեղքերս լուա՛,
 Ու քե՛զ պիտ'ուղղեմ ջե՛րմ մաղթանքներս իմ
 Օրհնեա՛լ ես փրկիչ, Տէ՛ր լո՛յս եւ կեա՛նք իմ:
 Պարտիզակ

ՍԻՐՈՂ ԵՐԻՏԱՍՍԱՐԴԸ

Հա՛ Ձասիկ եկաւ ես խնդամ պիտի:
 Ձայիր-չիմէնին կը վազեմ այի:
 Գիտես ի՞նչ սիրքս, հէ՛յ ա՛լ չունի խոց,
 Ո՛ւր է ձմեռն որ սրիս տուաւ խոց:
 Հերի՛ք պէ ախպար, հերի՛ք օր ասչափ
 Տունը մընացի, ցա՛սեմ ա՛լ չա՛փ-չափ:
 Խրոճած պապուկ մ'եմ գիտես ի՞նչ հիմակ:
 Հայտէ՛ հօք ընեմ, ցա՛սեմ մէյ մը սա՛նկ
 Ա՛լ նախասօնակն ընեմ Ձասիկին,
 Ասօր, կիրակի, մէջ լուսադբիրին:
 Ձարգարդարին մե՛նք գացին լուսադբեր,
 Ասօր կիրակի, Ձասիկն է հասեր:
 Ա՛խ, հոգո՛ւս տունը սիրեմ Բարբիո՛ն,
 Քեզի համար է իմ սէրս բիւրիւն:
 Ձասիկն կիրակին կը մօտենայ օր,
 Ինչանկ օր ըսի քեզի անցածն օր
 Վարի—կալերը պէ՛կէյէ՛ ինծի,
 Շէ՛ք պիտի տամ գողտո՛ւկ մը քեզի:
 Ա՛լ իժքէ տուն ալ, չիյեմ, գիտես եա՛,
 Ձասիկը ըսիր ա՛խ մէյ մը քե՛զ գայ:
 Բարեւ սա՛ր մօրդդ... չմոռնաս լա՛փն
 Սիրես քեզի է, սէ՛նէն պաշխա քի՛մ...
 «Մէ՛ն-Յի-Յի»

ՔԱՆԱԿԱՅԻ ՄԸ ԶԵՆԱԿԱՆԻԹԻՒՆԸ

ԿԵՏԻԿ-ՓԱՇՏԱՅԻ ԵԿԵՂԵՍԻՈՅՆ ՄԷՁ

Շարաֆ իրիկուն մը քահանայական ձեռնադրու-
 թեան կոչումը պիտի կատարուէր Կէտիկ Փաշայի եկե-
 ղեցւոյն մէջ. կանուխէն ներս մտայ եկեղեցիէն, առջի
 նստարաններէն մէկուն վրայ տեղ մը գտնելու համար:
 Թէեւ եկեղեցական արարողութիւնը տակաւին չէր սկը-
 տուած, սակայն եկեղեցին լեցուած էր երկսեռ խումբ
 բազմութեամբ: Մէկ պահարանին մէջ մտնելը քաշ-
 քէշէ քաշուիչէ կը խաղային եւ միւս պահարանին մէջ
 ալ աղջիկները՝ ճանճրեւ կուգայ, ձիւն կուգայ բիւլ-
 կ'եփենք եղ չիկայ: Հոս կ'ըն մը զրկի երախտան կը քը-
 նացնէ օր, օր, օր աղւորս օր, օր, օր, է, է, է, քուն
 ունի, քուն ունի, Եկե՛ր Գարուն տուն ունի, ոսկիէ չախ-
 չախներ ունի. իրէք թէլի պէս պապա մը ունի. որուն
 չարածճի տղայ մը մօտենալով կ'ըսէ, մարիկա ատանկ մի

պօռար, սա տղան տեսար մի կող Գէորգին տղան է,
 Եկե՛ր Գարուն տունիդ ոսկի չախները իմանալուն
 պէս կ'երթայ կը գողնայ:

—Մօ', վա՛յ կլխուդ, ասիկա օր օր ի երդ է, իմ տունս
 ուրկէց պիտի ըլլայ. ծօ', էնքէրճիին տունը քե՛սն ըլ-
 լալս չիյա՛ն:

Փողոցական տղաքներն ալ գուրսը կը կըզուրտէին
 եւ էէէք ա՛ւճա՛ կը խաղային:

Վերջապէս արարողութիւնը սկսաւ, կարգը եկաւ
 կոչման, երբ տիրացու Մագսուտը եկեղեցւոյ դռնի դռ-
 նէն կ'առաջնորդէին դէպ ի ձեռնադրող Սրբադանը, կին
 մը մտաւ ներս եւ հրամայեց ժամկոչին որ աթոռ մը
 բերէ. աթոռը բերուեցաւ, տիկինը հաճոյք մը պատճա-
 ուելու համար, ժամկոչին ըսաւ.

—Ժամէն ելլեն նէ, մեղի եկուր, Բահալէ Բօթէլ եմ
 չիներ, քեզի տամ տէ, տաքուկ տաքուկ կե՛ր:

—Ողջ ըլլիս խանրմ:

Ուրէ՛ն կէ՛ն Բէ Բէ Բէ Բէ:

—Քա թուրֆանտա, կայնե լով կայնե լով ոտքերուս պող պող ջուրեր կ'իջնայ կոր, ես ալ լահանա թուրուսի եմ դրեր, աճապա սա ժամկոչին քեանէ մը թուրչի տամ նէ, ինծի ալ իսկէմի մը կը բերէ՞:

—Քա խենթ էս չի բերեր, անիկա թալալանի կը նիկ ըլլալու է:

—Քա թուրֆանտա, նայէ՛, աստին ի՞նչ կ'ըլլայ կոր:

—Քա ի՞նչ եղաւ:

—Տիրացունքը հոռմերէն ի՞նչ էր ըրին տէ՛ ձեր մակ մորուքը տէրտէրը սրդողեցաւ:

—Քա՛ վու՛յ, վա՛յ մեղքիս, շինէ են՝ էլեր:

—Քա նայէ՛ նէնի Գարուի լուսարարը ծեծող տէր տէրը կը խնդայ կոր:

—Քա՛ Բերուզ ի՞նչ քիւֆիւր ըրին:

—Անաթեմա ըսին:

—Քա քիւֆիւր է քի:

—Քա՛, հապա՛:

—Ո՛ւյ, աչքդ չխողայ, ամէն պահէն ալ կը հասկնաս, բէ՛ք, եռմուռնախ կնիկ էս:

—Քա՛, ես վարի պղտիկ օտաս պաղըխծի Եօրկին չէ՞ր նստեր . . .

—Է՛յ, հա՛:

—Քա քուրուկ, օր մը տաւել կաւեմ կոր քիչ մը Խօշ ելաւ տէյի ասոր մարը անախեմաս էսէ տէի քիւֆիւր չը նէմի, ես ալ տաւելին կ'ըթովը, մէյմը ինչայ քի կ'լխուռն:

Մատամ Բերուզին ետեւը ուրիշ կին մը կայնած էր որուն գրկի երախան շարունակ կուլար, ետին դառնալով:

—Քա ճանը՛մ, մէմէ մը տուրտէ սըվոր ծանը կըտրէ՛, ես ալ ունիմ ամա, նայէ ծա՛րը կ'ելլա՛յ կոր:

—Քա՛ քուրուկ, կաթ չուտեր կոր, հիւանդ է:

—Ի՞նչ է էղեր քի:

—Խղամուխ կը հանէ կոր:

—Քա՛, վա՛յ մեղքիս, խենթ ես, հիչ խըղամուխ հանող չօճախը դուրս կը հանե՞ն:

—Քա խաչոր տէրտէր չինելնին հիչ տեսած չունէի տէ, հաւէսլէնմիլ եղայ:

ՍԱՐԳԻՍ ՓԱՓԱԶԱՆ

ՆՈՐԱԶԵԻՈՒԹԻՒՆԸ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ

(Սրուան խօսակցութիւններ)

Խեր ըլլայ Վահանիկ աղա, ո՞ւր կ'երթաս կոր ասանկ կասկարմիր կտրած:

—Ձգէ՛ Աստուածդ սիրես, ձգէ՛:

—Ի՞նչ կայ ճանըմ:

—Ի՞նչ պիտի ըլլայ, բարկութենէս պիտի ճաթիմ հիմակ:

—Ալլահ ալլահ, ի՞նչ կայ չըսե՞ս:

—Եկո՛ւր սա կաղինօն մտնանք տէ ըսեմ:

Ներս կըմանեն եւ կը նստին:

—Է ըսէ՛ նայինք ի՞նչ է եղեր:

—Ինչ պիտի ըլլայ, ժամը խախտութիւնը պակաս չէ,

ալ ժողովուրդը կը դայթակղի կոր:

—Իրա՛ւ հանելուկ է ի՞նչ է, կ'ըսես կ'ըսես մէջտեղ բան մը չի կայ:

—Ըսեմ տէ նայէ, եկեղեցի գացինք, դասը . . .

—Էյ դասը ի՞նչ է եղեր, նորէն տէրտէրի կոխէ, գանձանա՛կ ի՞նչ . . .

—Ատոնք ամէն օրուան են, աս քանի մը օր է, նոր մօտա մըն է ելեր, դպրոցին աղջիկները ժամ կը բերեն կոր:

—Է շատ աղէկ, ի՞նչ կ'ըլլայ աղջիկները ժամ բերելով, աշակերտ չե՞ն:

—Աղէ՛կ, մենք ալ բան չենք ըսեր կոր, թող գան ամա ի՞նչ ըսել է տէյ մարդիկներուն առջեւ կեցնել աղջիկները տէ, մանչերը կնիկներուն մէջը ձգել. ի՞նչ է եղեր, ժամը աղջիկտեսի՞ եք գացեր ինչ ենք ըրեր, չէնէ մի վերջին մօտան ասանկ կը պահանջէ, հիմակ ալ քիչ շատ խլալուգութիւնը վերցաւ նէ. այս միջոցով աղջիկները ծախելու են ելեր, անոնք որ ըսես, մէկը ներս, մէկը դուրս, մէկը . . .

—Է՛յ ասանկ հէ՛ . . . ո՞վ կը մնտես Կարալիս աղա:

—Հա՛ հոս է՞ք . . . Էյ ինտոր էր նայինք աս օրուան եկեղեցին, Վահան աղա:

—Մինչեւ աս տարիքս ասանկ ժամ չէի տեսած չիտակը . . . չկրցի կենալ դուրս նետուեցայ պէ՛ . . .

—Կենայիր տէ նայէիր ինչեր եղան . . . Բաց մեղ տէրը անանկ ճանիւղէ մը ըսին որ ինքզինքս դրօտա վարր մը գլտցայ . . . համրեցէք. աս մէ՛կ, տղաքներն ու մարդիկը ներս խուժեցին աղջիկներուն վրայ . . . երկո՛ւք. վարագոյրին ներսի կողմին ձայները վոխուեցան եւ վերջինը անանկ մէյմը պօռաց որ ո՞ւր ըլլալ չգիտցայ . . . երե՛ք. վարագոյրը չքաշուած տէր տէրները մէկիկ մէկիկ ելան կայնեցան աստիք չէր օգտեր տէ Զ-Կը մէկէն վարագոյրը ձեռքովին բանալով ներս փախան, արդեօք Դռնբացէքի արարողութենէն շատ զգածուած ըլլալով արցունքնին ժողովրդէն պահե՛լ կ'ուզէին . . . եւ դեռ գորն ասեմ եւ գորն խոստովանիմ . . .

—Ձրսե՞ս աղէկ ժամ չեմ գացեր:

—Էրնէկքեղի հանգիստ նստեցար:

—Դեռ ասիկա առաջին քայլն է. կեցի՛ր նայինք խաղըութիւնը ասիկցէտքն է, ալ գործ ունինք:

—Աղբար աղէկ տ երեք ժամ կայ. ամէնքը մէկէն ի՞նչ բան ունէին մէկ ժամը լեցուելու, աս ալ երկու տարի է ելաւ, առաջ մեր կիսնալը կնիկներունը զատ կ'ըլլար, չէնքը շնորհքն ալ ան կ'ըլլար . . .

Արդեօք Թաղ. Խորհուրդը եւ նոյն ինքն Ս. Պատրիարքը այս բանին անպատեհութիւնները նկատի չե՞ն առներ, եւ աւելի աղէկ չէ՞ր տղաքը ասղին բերել եւ գլխարկաւորներն ալ գլխարկաւորներու հետ խօսանել. մանաւանդ որ մինակ աղջիկներն ալ չեն, անոնց մայրերը, քոյրերը, եւ այլն եւ այլն. ամբողջ ազգականութիւնը կը լեցուին դասը: Այս խօսքերը ինչու դառնան եկեղեցիներու եւ աշակերտներու շուրջ եւ ժողովուրդն ալ պաղի իր եկեղեցիէն ասանկ օրերու մէջ. կ'ըսուի թէ այս բանը յղացողը յարգելի եւ նշանաւոր մարդ մըն է. մեղք չէ՞ իրեն պատիւին եւ համբաւին:

ՅԱԿՈԲ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

Պ Ե Ց Ա Ն Ա Վ Ա Ժ Ե Ն Ե Ր

Ի Ն Ք Ն Ա Կ Ա Ձ Ը

Պ. ԲԱՅԵԱՆՑ.—Ամուսնի երիտասարդ մըն է. հակառակ իր կոկիկ հագուստ ու կապուստին գրպանը միշտ 7 դրոշ. ունի հաշիս ըրած է որ գարնանը մըն է իրիկոսան մաշ աւով կրնայ մարել ևս ամեն օմիս ընելէ վերջը գըրպանը տասը փր. պիտի մնայ երկրորդ տոտոսան կամորջին համար. սրմարանի մը մեջ «Յիկատոյի» օրոտան խնորի մասին տոտան մանրամասնութիւններուն մէջ խորատուգոտան է ևս հագին երեք սիւնանի կարդալէ վերջը աւգամ մը տամպ մը քարնէն կը խմէ, շոտս չը լմնցնելու վայրով:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—Քրոտագէ մակեթին լամբակը մանրիշակի փնջիկ մը զետեղած է. հաւգոյցի ան փողկապին մէկ օայրը դոտոս երկնցած, օայրը վրան տալատը կը շոյէ յոսթրին կօշիկները:

Սրեմ սրմարանի մը մեջ ժամը իրիկոսան տատներ-կոտին միջոցները:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ (մօտենալով Պ. Բայեանցի սեղանին)—Եղբայր այս ի՞նչ է ասանկ հոգւով սրտով լրագիրին բաթտուեր ևս. ի՞նչ է կարգացածդ նայիմ (լրագիրը ձեռքէն յափշտակելով կը նստի) . . . հա՛ ի՛նչքան վըկայութիւնը, դուն ասիկա դեռ չի կարդայիր, ևս առտուն գրասենակը կարդացի (լրագիրը ձեռքը բռնած ուրիշ լուրերու վրայ աչք կը կը պտըտցնէ):

Պ. ԲԱՅԵԱՆՑ (ստոյալի կերպով սրտնեղած) .

—Բայց եղբայր քանի որ կարդացեր ևս լրագիրը տո՛ւր որ շարունակեմ, կարծոնք միշտ շուրջս դարպաս կ'ընէ որպէս զի լրագիրը իրեն տամ, հիմա պիտի կարծէ որ ևս կարդացի լմնցուցի . . .

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ (միշտ աչքերը լրագիրէն չը գատելով)—Տանըմ լրագիր պիտի կարդաս. սանկ քիչ մը խօսակցինք աւելի աղէկ չ'ըլլա՞ր . . .

—Կարսօն պիւր սիւեան պիւրա:

Պ. ԲԱՅԵԱՆՑ (ինքնին կը մտածէ), Զիւնը գլխուս մենք ասկէ 60 վր.ով պիտի ազատէինք հիմա ի՞նչ պիտի ընեմ այս գլխացաւը ուրկէ՞ ելաւ. սա տեղ ինքիւր դըլխուս նստեր էի, մէկու մը փնտս չունէի, լրագիր կը կարդայի կոր . . . ասոր ալ արժանի չենք եղեր:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—Շատ բան . . . կարդացիր աս ահռելի ոճիրը. (քիչ մը դեռ շարունակելով) հա՛, հա՛, հա՛ է՛յ ասիկա շատ թօհաֆ հա՛ հա՛ հա՛ . . .

Պ. ԲԱՅԵԱՆՑ.—Ի՞նչ է, ինչո՞ւ կը խնդաս, նայիմ ևս ալ կարդամ (լրագիրը հնարքով մը շորթել կ'ուզէ. բայց Պրուզան ամուր մը բռնած թող չի տար, Բայեանց ալ գոգոհութիւնը չկրնալով զսպել) եղբայր շատ զարմանալի մարդ ևս, սա տեղը եկար ձեռքէս լրագիրը յափշտակեցիր, հիմա ալ ես չեմ տար. աղէկ քաղաքավարութիւն . . .

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ (միշտ գլուխը լրագրին վրայ ծռած) հիմա՛ հիմա՛ . . .

Ահ անիծեալ որիկաներ, այսչա՛փ սուտ խօսիլ . . .

Պ. ԲԱՅԵԱՆՑ (տեսնելով որ ուրիշ ճար չի կայ հնարք մը կը մտածէ) անյայտ կերպով վճարել ու ուրիշ սրճարան մը երթալ. ոտք ելլելով, կամացուկ մը ծառան կը կանչէ):

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—(Տեսնելով որ իր սեղանակիցը երթալու վրայ է)—Ո՛ւր կ'երթաս կոր . . .

Պ. ԲԱՅԵԱՆՑ.—Ուրիշ սրճարան երթամ . . . հոս խամէթ չըլլար կոր որ կուշտ ու կուռ լրագիր կարդամ . . .

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—Աֆէրիմ պէ՛ . . . այսչափ լրագիր կարդալու փափաք ունենալուգ քիչ մըն ալ քաղաքավարութիւն սորվելու փափաք ունեցիր. սա տեղը եկայ դիս սեղանդ հրաւիրէ, անկէ վերջը ա՛ռ քալէ. ի՞նչ է ըսես . . . էֆէնտին լրագիր պիտի կարդայ եղբւր. եթէ այսչափ կը սիրես, Պօն Սարշէն առնէիր տէ՛. տունդ երթայիր կուշտ ու կուռ կարդայիր, ասանկ բիւպիք տեղ ի՞նչ իրաւունք ունիս ժամերով լրագիրը գրաւելու:

Պ. ԲԱՅԵԱՆՑ (ինքնիրմէն ելած) խեղդ անիծեմ անպիտան . . . վարպետ գողը տանտէրը բռնել կուտայ կ'ըսեն . . .

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ (կատակի դարձելով) աստամ տուն ալ շատ բարկացուտ ես, ամենեւին կատակ չեմ վերցներ. (լրագիրը ուրիշ սեղանի մը վրայ դնելով) ո՛չ դուն պիտի կարդաս ո՛չ ալ ես . . .

(Մտան արծիւի մը պէս կը ուռայ, կը յափշտակէ լրագիրը եւ ուրիշի մը կը տանի):

Պ. Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ (առջի դարեջուրի գաւաթը սլարպէլէ վերջը երկրորդ մը կ'ապալդէ) է՛հ երէկ իրիկուն ի՞նչ ըրիր նայինք . . . էֆէնտին երէկ իրիկուն քօնսէրը ըլլալու էիր ա՛ն ի՞նչ թուալէթներ, ան ի՞նչ աղոր կը նիկներ. հէլէ Մտ. Ա. . . անանկ կը փայլէր կոր չըլլար. ա՛լ խել մը պլան պեքեր չորս կողմը կը շրջապատէին բայց գիտես ես ծառայիդ ուրիշ աչքով կը նայի . . .

Պ. ԲԱՅԵԱՆՑ Այո՛ գիտեմ, ամէնուն չիտակ կը նայի քեզի շաշի . . .

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ. ասանկ պաղ կատակներ ալ չընես հիւանդ կ'ըլլաս . . .

(Կարսօնին բերած դարեջուրը մէկ շունչով կը խմէ):

Սոսկալի նախանձոտ բնաւորութիւն մը ունիս ճիշտ հիմա ինծի լրագիր չկարդացնել տալդ կը նմանի. կը կարծես որ ա՛տ շէշպէշ սուռաթիղ, ծուռ մօրուքիդ աղջիկ մը կրնայ սիրահարուիլ. կիներու քով մօն շէր յաջողելու համար ջեմ գիտեր ինչ մը կայ որ քու քովդ կը պակսի . . . (Ժամացոյցը նայելով) ծօ՛ ես կէսին մէկու մը հետ րանտէվոս մը ունիմ (ոտք ելլալով) օ ըրվուար (կը մեկնի):

Պ. ԲԱՅԵԱՆՑ —(Կարսօնը կանչելով մինակ իր խըմածին ստակը տալ կ'ուզէ, առարկելով թէ ինքը չէր հրաւիրած իր սեղանակիցը՝ որ ինքը իր կողմանէ հրամայեց դարեջուրերը բայց ի զո՛ւր, ծառան գացողը չի ճանչնար խեղճ մարդը կ'ստիպուի վճարել):

—Ա՛հ չի հասնէիր հոս գալու, Աստուծոյ փորձանքը. թշուառական թէ լրագիրէս ըրիր ինծի թէ իրիկուն ճաշես . . .

(Անթի փորանց դէպ ի պառկելու սենեակը կ'ուղղուի):

ՉԷԼԵՆԹՈՍ

ԽՐԱՄԱՆ ԳԻՇԵՐ

Աղջիկ ելիր վրադ Եսկէ՛
Կոչնակ զարկաւ քամ վախիթ է
Մինչեւ «միտեա»ն վրան դընեմ,
Կնա՛ հագուէ՛ վախսը ու՛ է:

Մաշան նիմ տաք, մագըղ դարձուր
Ջուրով բուսուան աղէկ կեցուր
Մինչեւ վելոս գլխուս կապեմ,
Մի տնայար Ես լըմընցուր:

Ջիւլիւճներդ ականջդ ի վար
Թոք քոք Եսկէ, գէշ չեքեար,
Մինչեւ բոքինս օսնա քաշեմ
Տուն սիւսըդ տուր, պօք մի՛ կեցար:

Մայր ու աղջիկ հագուած սրգուած
Կարմիր Զատիկի հովեր առած
Մինչեւ հասան ժամուն դուռը
Տեղ չը գըտան, էր խիստ լեցուած:

Աւելըդ խաղայ Սուրբիկ նայէ՛
Տըվոր բէշը ի՞նչ խումաշ է,
Մինչեւ մէջկը՝ կարմիր կանանց
Թաւրոնն ենք մի, եա սուտուէ՛:

Հելէ սըւոր քեւին կուսօն
Բարակ սըխը դախը պաւսօն
Մինչեւ վերի խապառքմային,
Բօք է քաշեր իբէք կըռօն:

Շաբխան նայէ վրան պախանա
Չայիր չիմէն քօք սալաքա,
Մինչեւ աւելին մէջը՝ քիւյր
Թող չի տար կոր քի մարդ տեսնայ:

Քա, Եսկա առջի պերան
Սուգով կիսցայ, վայնի վ րան
Մինչեւ քեքէն սեք սեւ քիւրիւկ
Տիւզէն տուր մօտա ճիւրքան:

Ժամկոց ախպար ծանդ հանէ՛
Քա՛ ինձոր ալ սիւսդ լան է
Մինչեւ անգամ կիւրի խունախ
Հէտ են բերեք, տուր լայ նէ:

Քա՛ . . . վայ մեղիս «հայ մեր» մ'օլտուն
Տահա չըսի մօրուս նոգուն
Մինչեւ հիմայ ճիւսան շաբխա
Սէյիր քրի, ե՛լ երթանք տուն:

Հայտ Սուրբիկ վախսը անցաւ
Պէլի հարդ ծուկը բերաւ
Մինչեւ երթանք տուն իյնանք
Սաղլամ տղան տակը առաւ:

Վ. Փ.

ՎԱԹԱՌԻՆՆՈՑ ՄԸ ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ ՅԻՍՈՒՆՆՈՑԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Անդլիական կամ մանաւանդ ամերիկեան բարքերը, ժամանակէ մը ի վեր սկսած են մեր մէջ ալ մուտ գըտնել, հերքելով սա ծթած զաղափարը թէ՛ մենք օտարներուն միայն արտաքին երեւոյթները կապկարար կ'ընդօրինակենք՝ անիրաւ ամբաստանութիւն մը, որ այս անգամ իզական սեռէ . . . յիստենոյի մը կողմէ գործնականապէս խալառ ջնջուելու գոտապարտուեցաւ, կամ թերեւս մենք այդ տեղի կամ անտեղի ենթադրութիւնը ունեցանք երբ անցեալ շաբթուան Սուրհանդակի էջերուն մէջ կարդացինք Մամաթիայի յիստենոյ օրիորդի մը կողմէ յայտնուած դանդաւանները, Մաքրիգիւղի երկտասարդներուն դէմ:

Սուրհանդակ, իր անունը եւ մականունը արդարաւոր յնող արագութեամբ արձագանգ ըլլալով մեծ ծառայութիւն մը մատուցանելու հաճոյքը պատճառած էր յիստենոյ օրիորդին՝ որ Սուրհանդակի միջոցաւ կրցած էր իր նպատակին հասնիլ . . .

Սուրհանդակ անշուշտ բարեգործութիւն մը ըրած ըլլալու բարեպաշտ գիտակցութեամբ՝ չափաւ ուզէ մտածել թէ ուղղակի կամ անուղղակի տասնօրեակի խոստովանանայր քահանային պաշտօնը ստանձնած էր, բէքլամ մը ընելով թէ, բարի տրամադրութիւններով օժտուած յիստենոյ մը պատրաստ է դիւրամաշէլի պայմաններով իր ձեռքը կտրիւնել բարեպաշտ վաթսուհիները, որ ըլլայ, տուննիւր, չէնք չնորհք, խելքը գըլուխը, եւ այլն . . .

Արդ այս անգամ եւս հաստատուեցաւ գաղղիական առածին սա ճշմարտութիւնը թէ «ստատանային վրայ խօսուած ժամանակ՝ պոչը կ'երեւայ» քանի որ միւլենոյն ձիւքերով օժտուած վաթսուհիները չնորհքով Մաքրիգիւղի մը՝ Սուրհանդակէ այն թուականէն ի վեր, սկսած է ի խնդիր յիստենափայլ օրիորդին, վաղեմին աշակողմեան պատուհաններէն միոյն առջեւ բազմիլ, չնորհալ բարեւ մը զրկելով, հոգեզուարճ երջանկութիւն մը պարգեւելու համար յիստենոյին:

Արդ շնորհ և բարեգործ մը պիտի փափաքէինք Մաք-
րիգիւղի քսաննոցները Սամաթիա եւ Սամաթիոյ յի-
սուննոցները՝ մանաւանդ վաթսուներեքը՝ Մաքրիգիւղ
լեցնել, քանի որ այս վերջիններու կողմէ յիսուննոցնե-
րով չահագորդուելու մեծ փափաք ցոյց կը տրուի:

ՍԱՄԱԹԻԱՅԻ ՈՒՓՍՈՒՆՆՈՅ ՄԸ

ՆՄԱՅԸ ՄԸ ՀԻՆ ՄԵՀԱՅՁԻԻ

(ՈՐ ՆՈՐ Ե)

Է Մ Ա Հ

Ընկերուհի ձամհի Բարթիկ Երկանեանի, դուստր
Պիլէզիկեան Յովհաննէս աղաի, է ամաց իբրեւ 85ի-
թողի 3 զաւակ եւ բազում որդոց որդի, Աստուած միւթ-
թարէ ընկեր իմ սիրելի, 53 տարի ընդ քեզ էի: Թաղման
հանգէսը ժամ 6ին պիտի լինի, բարեկամք կը հրաւիր-
ուին ի դամբարան Գուռուչէճմէի, Աստուած միւթթարէ
ընկերն իմ սիրելի, զի աշխարհիս մէջ անմիւթթար թողի,
այս կարգացողին վախճանը բարի լինի:

Գրեցի այս թուղթ ի տուն Բէթէնճեանի: Աստուած
իրեն ողորմի:

ԻՆՉԵՐ ԿՍՆՑՆԻՆ ԿԸ ԳՍՈՆԱՆ

Մ Ա Ք Ր Ի Գ Ի Ի Ղ Ի Մ Է Չ

Այս Մաքրիգիւղի մանչ-աղջիկ կուսակցութեան
խնդիրը երբ պիտի վերջանայ:

—Երեք վերջանալիք չունի, քանի որ ներկայ տը-
նօրինութիւնը կը յամառի այդ մասին:

—Այդ աստիճան յամառելու ի՞նչ պատճառ կայ:

—Անոր համար որ տնօրէնն ալ մանչ աղջիկ է
արդէն:

* * *

Այդ նոր ընտրուած թաղականը շատ աղքատ մարդ է
եղեր, իրա՞ն է:

—Այո՛:

—Է՛յ ինչո՞ւ համար այսքան ատեն վարժարանին
բոլորտիքը կը դեգերէր՝ առանց ներս մտնել համարձա-
կելու:

—Վախճալով որ ներսինները վրան թափելով՝ բը-
զիկը չհանեն:

—Բայց հիմայ որ թաղական ընտրուեցաւ, ի՞նչ
պիտի ընէ:

—Հիմայ ալ ինք անոնց բզիկը պիտի հանէ:

* * *

Սկիւտարի վարժապետները ու վարժուհիները ին-
չո՞ւ այսքան իրարանցումի մէջ են:

—Ապագայ մեծ գութն մը վախը կը կրեն:

—Ի՞նչ է այդ գութնը:

—Մաքրիգիւղի մանչ-աղջիկ կուսակցութեան մօ-

տալուտ անկումը, որոնց հեղինակները մեծամասնու-
թեամբ Սկիւտարցի բլալով՝ նորէն հոն պիտի քշուին:

* * *

Կոթայի սլարտէզին մէջ:

Երկու բարեկամներ հազիւ թէ նստած են, կառ-
սօնը գլուխներնուն վերեւ կը տնկուի:

—Պարոնները ի՞նչ կը հաճին առնել:

—Երկու գարեջուր բե՛ր:

—Ո՛չ, ո՛չ, բարեկամ. ինծի համար լիմօնատ կա-
ղէօզ մը:

—Ի՛նչ, ստամոքսնիդ անհանգի՞ստ է:

—Վերջին ծայր:

—Իժիշկի մը երթայիք:

—Դացի, եւ ինքը յանձնարարեց այս լիմօնատ կա-
ղէօզը:

—Ըսել է թէ կերածնիդ չէք կրնար կոր մալ սել:

—Ոչ, միայն կերածս չէ:

—Հապա ի՞նչ բան:

—Սա մանչ-աղջիկ կուսակցութիւնը:

* * *

Արձակուրդի ատեն:

Քա Գոհարի՛կ, իրա՞ն է որ մեզի մանչերէն պիտի
զատեն եղեր:

—Կարծեմ թէ իրաւ է:

—Է՛յ ի՞նչ պիտի ընենք այն ատեն:

—Հոգդ անգամ մըներ. Զէյթինլիի ծովեզերքը ողջ
ԵՂՄԻ:

ՄՈՄՈՎ ԿԸ ՓԵՏՈՒԻՆ

Դրամօժիտը հալեցնելէ վերջ, սիրոյ մէջ յարատեւ ա-
մուսիններ:

Առանց խոշոր խոշոր ակնկալութեանց՝ Աստուծոյ
գործին մէջ, ժրջան աշխատաւորներ:

Ղալաթիոյ եկեղեցին ուխտը կատարելէ վերջը՝ պո-
ղոստէն չդիմող ընտանիքներ:

Քսանէն պակաս խանութ մտնելով յիսուն փարա-
նոց պատմա միայն դնող եւ ծննդաբաններ:

Դեղին սկառքին չի հաղնող չիկ հաֆթալէիներ:

Տան Բոսանդուքներու մէջ սէր չի յայտնող փոփանէր:

Դպրոցներու մէջ բարոյականի վկայական առնող
չըջանաւարտներ:

Բժշկի խորհրդովը միայն ակնոց դնող պարոններ:

Առանց քսանեւջորս ժամուան Բոսալէի աղջիկտես
եղող օրիորդներ:

Կեսրով հեա եալ ու պալէ հարսնուկներ:

Տարի մը շարունակ մէկ վաճառատան մէջ գտնուող
(սէօզիւմ եսպանա) գրագիրներ:

Առանց կանխաւ ստորագրութիւն առնելու մանչ եւ
աղջիկ կարգող Դոհապէի Բէլալէիներ:

ԾԱՂԻԿԸ առանց խնդալու կարգացող խոթուա-
ղէիներ:

Վ. Փ.

ՇՅՏ ՔԻՉ ԿԸ ԳՏԵՈՒԻՆ

Շատ քիչ կը գտնուին, պոնտու հագնող եւ դեր-
ձակին սարսափ չունեցող միւսիւններ :

Աղօթելու համար միայն եկեղեցի գացող մատմա-
ղէիներ :

Եկեղեցին իբր սրբավայր նկատող միւսիւններ :

Հուսացուելէն անմիջապէս ետքը կարմիր գէմը ու-
նեցող տիկիներ եւ օրիորդներ :

Ակնոց դնող եւ ակնոցի իրաւամբ սէտք ունեցող
միւսիւններ :

Երկու օրուան համար զբամ փոխ առնող, եւ եր-
կու ամիսէն առաջ վերադարձնող պարտաճանաչներ :

Պատրիարքարանի որոշած պաշտօնը, առանց վերա-
պահութեան եւ առարկութեան, ընդունող եկեղեցա-
կաններ :

Հարուստ աղջիկներուն արժանիքը գնահատելով եւ
անոնց անձին սիրահարող երիտասարդներ :

Առանց մէկ կողմին ճանաչելու, ամուսնու-
թիւն յարմարեցող խառնակներ :

Քիչ գրելով շատ բան հասկցնող յօդուածագիրներ,
նոսք տուած օրը գգեստ յանձնող դերձակներ :

Երկուշաբթի օրերը աշխատող կօշակարներ :

ՄԵԾԱՏՈՒՐ

Յ. Գ.—Վերջին սահուն կ'իմանամ որ շատ քիչ կը
գտնուին նաեւ ծով ու ցամաք անցնելով, (Իսկիւտա-
րէն չհասկնաք) Ծաղկազարդին շաբաթ օրը Պահէ-Գա-
բուի մէջ, հրապարակաւ իրենց սահքը ուտող աւագ-
քահանաներ :

ՆՈՅՆ

ՀԱՐՑ—ՊԱՏԱՍԽԱՆ

—Ի՞նչ տարբերութիւն կայ ժամացոյցի մը եւ կնոջ
մը միջեւ :

—Առաջինը ժամերը կը յիշեցնէ իսկ երկրորդը ժա-
մերը կը մոռցնէ :

—Ի՞նչ տարբերութիւն կայ թաղականի մը եւ ժամկոչի
մը միջեւ :

—Առաջինը մոմ կը ծախէ եւ խալի կը պտտցնէ
իսկ երկրորդը կը տնօրինէ եւ կը գործադրէ :

—Ի՞նչ տարբերութիւն կայ տանտիկնոջ մը եւ սալա-
սուհիի մը միջեւ :

—Առաջինը սալատօնապէս կ'սպասարկէ, իսկ երկրոր-
դը ոչ պաշտօնապէս :

—Ի՞նչ տարբերութիւն կայ Տնտեսական եւ Ու-
սումնական խորհուրդներուն միջեւ :

—Առաջինը իր ամբողջ երկու տարեշրջանին մէջ հազիւ
երկու անգամ օրինաւոր նիստ ունեցած է, իսկ երկրորդը
հազիւ երկու անգամ նիստ գումարած չէ :

—Ի՞նչ տարբերութիւն կայ վարժապետի մը եւ
վարժուհիի մը միջեւ :

—Իրենց ծանօթ . . . տարբերութիւններէն զատ
առաջինը կը խնկարկէ թաղականները եւ երկրորդը կը
խնկարկուի թաղականներէն :

Խ.

“ԾԱՂԻԿ”Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՊԱՐՏԻՉԱԿ, Ապրիլ 12.—Տեղւոյս իգական քննա-
նաւ դասը մեծ փութկոտութեամբ պատրաստութիւններ
կը տեսնէ Չատիկ տօնին առթիւ տէլի խանլըներու առ-
ջեւ մէկ մէկ հրեշտակ երեւնալու համար :

ՆՈՅՆ, Ապրիլ 14.—Ստոյգ աղբւրէ կը տեղեկա-
նանք թէ՛ մէկ երկու երիտասարդներ խորհուրդի մէջ
են, ի մօտոյ աղջիկ մը «յէնկայ» ընելու համար. եւ ամէն-
գոհողութիւն յանձն պիտի առնեն. կ'ըսուի, պսակի արա-
րողութիւնը բռնի վարդապետի մը կատարել տալու հա-
մար. եթէ կատարուի, մանրամասնաբար կը տեղեկա-
գրեմ ձեզ :

ՆՈՅՆ, Ապրիլ 15.—Նոյնպէս ստոյգ աղբւրէ կը
տեղեկանանք թէ, տեղւոյս իգական սեռը թէ մեծ թէ
պզտիկ ընկերութիւն մը կազմած են, որուն նպատակը
պիտի ըլլայ, յառաջիկայ Չատիկին երիտասարդաց ուշա-
գրութիւնը աղջիկներու վրայ հրաւիրել, հոգ չէ թէ մա-
րողներ ալ պիտի ըլլան. կ'ըսուի թէ այս ընկերութեան
անգամակցած են նաեւ Օվաճըքի, Արսլանայէի, Տէօնկէլի-
հայ իգական սեռն ալ . . .

ՆԱՌԼԸ ԳԱՐՈՒ, 12 Ապրիլ.— մէկ քանի տղա-
յոց գլուխներէն ոջիւներու ջոկատ մը ձերբակալուե-
ցաւ եւ թուղթի մը մէջ ծրարուելով, տուն զրկուե-
ցաւ երթակայներու ձեռամբ :

ՆՈՅՆ 13 Ապրիլ.—Հաւաքածոյ անթեւ սոխակներու
կամ հունգարական ոսկիներու.—Շատ մը ծնողաց գան-
գատներէն ստիպեալ տղայոց մաքրութիւնը քննու-
թեան ենթարկուեցաւ. արդիւնքը սա եղաւ որ չորս ա-
շակերտի գլխէն գտնուեցան 13 հատ, որոնք պահա-
րաններու մէջ գրուելով զրկուեցան նոյն աշակերտաց
ծնողքներուն :

ՆՈՅՆ 14 Ապրիլ.—Ռեժիի բանուկ յաճախողներ-
կասկածի մը համաձայն քննութիւն մը կատարուեցաւ
տղոյ վրայ եւ հաստատուեցաւ որ մէկ քանի տղայք
ծխախոտ կը քաշեն փողոցներու կամ պարտէզներու
մէջ, իրենց հօր ծխատուիէն ծխախոտ գողնալով կամ
գետնէն ճառագիւղ տղոց նման լլճաբէթ ժողուելով :

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ, 16 Ապրիլ.—Մայր-եկեղեցւոյ թաղ-
խորհուրդը իր պարաքը վճարելու համար այն աստիճան
զբաղած է որ չի կրնար հսկել եկեղեցւոյ բարեգործու-
թեան, ինչպէս ընդհ. տեսուչ մը հսկէ եկեղեցիին
վրայ, նաեւ պէտք եղածը ընէ որ որպէս զի պարապ մնա-
ցած երկու շէնքերը վարձու տրուելով լաւ հասոյթ մը
արտագրեն եւ անով կարողանայ իր պարաքը վճարել, եւ
մօմակալներուն մէջմէկ հողաթափ առնել :

ՄԵԾ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԻՍ

ՉԱՅՆԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԻԱԿԱՆ

Ապրիլ 21 Զուրեքշաբթի գիշեր ժամ 9ին (Ը. Ե)

ԻԻՆԻՅՆ ՅՐԱՆՍԷՉԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՉ

Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ե Ա Լ

Մ. Ս. Ք Է Օ Ս Է Ե Ա Ն Է

Աջակցութեամբ իր աշակերտներուն, քաղաքիս լաւա-
գոյն բրօքսէտներու եւ տէլիթանթիներու :

ԳԻՆ ՏՈՄՍԱԿԻ ԿԷՍ ՈՍԿԻ

Ա Ջ Գ Ս Յ Ի Ն

— 330 —

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը Ս. Զատնի տօնին շնորհաւորութեան պաշտօնական այցելութիւնները պիտի ընդունի նոյն տօնի երկրորդ օրն Երկուշաբթի (Ապրիլ 19) ժամ 7ին, Ազգային Պատրիարքարանի մէջ:

— Ս. Պատրիարք Հայրը մայրաքաղաքիս եկեղեցիները յատուկ շրջաբերական մը ուղղելով, կը ծանուցանէ թէ ոստիկանութեան նախարարութեան կողմէ Պատրիարքարան հաղորդուած մէկ պաշտօնագրի մը համաձայն, Զատնի առթիւ հրապէն արձակելու բացարձակագէտ արգիլուած է:

— Գոհութեամբ կը տեղեկանանք թէ ռուս մանական կառավարութիւնը՝ Ռուսմանական Թոգ պատուանշանին մեծ խոշը նուիրած է Բ. Դրան իրաւագէտ խորհրդական Վսեմ. Գաբրիէլ Էփէնտի Նորատունկեանի:

— Նոյնպէս գոհութեամբ կ'իմանանք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է Լիազարթի ոսկի շքադրամ շնորհել Սաալահ լրագրի Տէր և Տնօրէն Միհրան Էփէնտիի, ի վարձատրութիւն այն մեծ ծառայութեանց զորս կը մատուցանէ Օսմանեան Տպագրութեան և Մամուլին:

— Գոհութեամբ կը ծանուցանենք նաև թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է Միւթէմայիզի աստիճան շնորհել հայերէն թերթերու գրաքննիչ Մինաս Էփ. Կամսարի:

Կը շնորհաւորենք յիշեալ Էփէնտիները իրենց եղած այս արժանաւոր գնահատման համար:

— Հայ Հռոմէականաց Էնկիւրիի առաջնորդ Յովհաննէս Եպիսկ. Յովհաննէսեան որ իր անձը դարմանելու համար Պոլիս եկած էր, եշ. գիշեր վախճաներ է:

Կ Ի Կ Ն Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը Վ Ա Ռ Ն Ա Յ Ի Մ Է Զ

Ասկէ երկու ամիս առաջ Վառնայի աւագերէց Տ. Մարտիրոս քահանան տասներմէկ տարինէն ի վեր Վառնայ հաստատուած Մշոյ Աւրան գիւղացի Մանուկ Յ. Ապտալեան անուն անձին ամուսնանալու փափաք յայտնած ըլլալը յայտադրելով, խնդրած էր Պատրիարքարանէ ստուգել յիշեալին ամուրի ըլլալը. Պատրիարքարանը բնականաբար խօսոյն այդ մասին հարկ եղած տեղեկութիւնը ուղած էր Մշոյ առաջնորդական փոխանորդէն, որ իր կարգին տեղեկութիւնները տրուած էր Աւրան գիւղի քահանայէն: Իրաց այս վիճակին մէջ Վառնայ գլուխուղ Հիւրմիւզեան Տ. Գէորգ քահանան՝ օգուտ քաղելով աւագերէցին բացակայութենէն, փետրվար

23ին օրը, յիշեալ Մանուկը հանդիսաւորապէս կը պատկէ այրի կնոջ մը հետ: Եւ ահա մէկ քանի օր վերջը պատրիարքական փոխանորդ Տ. Գաբրիէլ Սրբազան Մշոյ առաջնորդարանին 77 թաւահամար հետեւեալ պաշտօնագիրը կը հաղորդէ Վառնայի աւագերէցին.

«Մշոյ Աւրան գիւղացի Ապտալեան Յարութիւնի որդի՝ Մանուկը, հոս ամուսնացած եւ կինը ողջ է. յիշեալ 11 տարիէ ի վեր իր խեղճ կինը երեսի վրայ թողլով մեկնած է աստիճան:

Եւ պատրիարքական փոխանորդ Սրբազանը վերոյիշեալ պաշտօնագրին կցած էր քրտութիւն մը, որով կը յանձնարարէր Տ. Մարտիրոս քահանայի, յիշեալ Մանուկը եկեղեցի հրաւիրել և յորդորել որ ժամ առաջ իր ծննդավայրը վերջին ծայր թշուառութեան մատնուած կնոջը քով երթայ:

Անշուշտ իրողութիւնը տեղեկագրուած է Պատրիարքարան, կը յուսանք թէ Կրօնական Ժողովը Պօթուշանի Աթանաս աղային պէս ազա մըն ալ կը շինէ այս Տ. Գէորգը:

Մ Է Կ Մ Ա Ր Դ Ո Ւ Ե Ր Ե Ք Կ Ի Ն

Ուրիշ աւերի ցաւալի լուր մըն ալ կը հասնի մեզ Վառնայէն:

Ազգային մը որ ժամանակաւ Կարսի մէջ ամուսնացած է եղեր, կինը հոն թողլով կ'անցնի Երզրում և հոն երկրորդ անգամ՝ կ'ամուսնանայ, այս երկրորդ կինն ալ Երզրում խեղճ վիճակի մէջ ձգելով Վառնա կ'երթայ և հոն ալ երրորդ անգամ կ'ամուսնանայ: Աստուած չորրորդէն պահէ. կ'երեւայ թէ այս անխիղճ և անպիտան մարդը հինէն բնաւ չախորժիր և միշտ նոր փեսայ մնալու մեծ հաւելս մը ունի:

Ո Ս Կ Ի Ժ Ա Մ Ա Յ Ո Յ Յ Մ Ը

ԶՈՒՏ ԹՈՒՐԻՔԵՐԷՆ ԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այս օրերս, զուտ թուրքերէն յօդուած մը գրելու կարելիութեան վրայ թեր ու գէմ կարծիքներ կը փոխանակուին թերթերու մէջ, որմէ կը հասկցուի թէ զուտ թուրքերէն գրել եթէ ոչ անկարելի գէթ շատ դժուարին նկատուած է, այնպէս որ Իքթիս անուն թուրքերէն գրական թերթի խմբագրութիւնը խոստացած է ոսկի ժամացոյց մը նուիրել անոր՝ որ կը յաջողի զուտ թուրքերէն (առանց արաբ. և պարս. բառեր խառնելու) յօդուած մը խմբագրել և ներկայացնել իրենց Զուտ թուրքերէն գրելու կարելիութեան վրայ պընդողներուն ահա առիթ մը: Տեսնենք, սա՛ ժամացոյցը որո՞ւն խրովէք պիտի ըլլայ. Պետրոս Էփ. Կառապետեան որ գրեթէ անկարելի կը նկատէ զայն, կը յուսանք որ ժամացոյցին՝ չղթայ մըն ալ ինք իր կողմէ կ'աւելցնէ: Թուրքերէնի մասնագէտներուն աչքը լոյս:

ԹԱՇՃԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Բերա Մեծ Փողոց քիւ 308 Բոնֆորտիայի դիմաց

Պատիւ ունին ծանուցանել իրենց բազմաթիւ յաճախորդաց թէ իրենց վաճառատունը վերստին բացուած է, միեւնոյն տեղը, ուր կը ծախուին ըստ առաջնոյն կանանց շրջագոյնտի համար ամեն տեսակ պիտոյք, Տապէր, կոճակ, սալիկ, ժապաւէն, ժանեակ, եւայլն եւայլն. ու կանանց արդուզարդի վերաբերեալ իրեղէններ, Բարիդի առաջնակարգ գործարաններէ պատրաստուած: Այս վաճառատուն իր 25 տարուան յարատեւութեամբ արդէն արդոյ յաճախորդաց վատահոգութիւնը գրաւած ըլլալով աւելորդ կը համարուի կրկին յանձնարարել:

ԷՔԻԹԱՊԼ

[ՄԻԱՅԵԱՂ, ՆԱՀԱՆԴԱՅ]

ԱՇԽԱՐՀԻՍ ԷՆ ՀԶՕՐ

Կենաց Աստուծոյ պաշտպան Ընկ.

ԵՐԱՇԽԱՐՀՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԻՈՒԽՆ Է

1 Միլիառ 227 միլիոն Քրանֆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Կ. ՊՕԼՍՈՅ

ԴԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

ԳՐԱՏՈՒՆ Զ. ԹՈՐՈՍԵԱՆ

Չագմագներլար, Վալիսէ խան

Բառգիրք Անգլ.-Հայ. Վ. Յ. Յակոբեան, գին քառորոնէ 54, ընտիր լաթկղմ. 60, ընտիր թղթով 108 : Գաւառական կարօտ դպրոցաց զեղչ 30% :

Բառգիրք Հայ-Գաղղ. Ն. Տէմիրճիպաշեան, գրքին ետեւը յատուկ անուանց բառգրքերով. գին քառորոնէ 15, լաթկղմ 17½ : Կարօտ դպրոցաց 30% զեղչ :

Պէտք ունեցողները գրաւոր պատուէն դիմել պարտին:

ԿԻՉՈՒ ԳԻՐԵՐ

Բաց ի հայ եւ անտառ ծառերէն բազմաթիւ վէպերէ, գրատան մէջ կը գտնուին Հիւկոյի, Զօլայի, եւ այլ բազմաթիւ երեսեր, յայտնաբերող գրքերը, հանդէսներ, ամէն տեսակ դասագրքեր, մանկավարժական պատկերազարդ գրքեր: Ուսուցիչներ, անուշաւիք, դրասէրք կը հրաւիրուին այցել եւ օգտուիլ առիթէն:

Թէ վաճառելի եւ թէ վարձու գրոց պայմանք մատչելի են ամէն քսակի:

Դրատունը ըստ է ամէն օր, եւ պատրաստ ամէն եսակ յանձնարարութիւն կատարելու, եթէ փոխարժէքը անխիլ է :

[Հաստատեալ յամին 1852]

ՏՐՐ. Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ-ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Թ/ւ 396, Մեծ - Փողոց Բերա

(Եանիի Գարեջրատան վրայի յարկը - Յիշդ Չըպուզ-ճեանց դէմ)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենաառատիկ յաւած աղաներն մէկ անգամէն կը լեցուին, ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ:

Նորահար եղանակաւ, նաւթ, ճաշակաւոր եւ դիմացկուն արհեստական աղաներ կը պատրաստեն, յար եւ նման լոտկանի, դէմքի ձեւաւորութիւն ըստ տարիքի, ծամողութիւն, եւ ազատ արտասանութիւն եւ ընդհանրեալ:

Բերնի հիւանդութիւնք կատարելապէս կը բուժուին, ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղերու, եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ առանց ցաւի ատամնախնամութիւն:

Յ. Գ. Չմեռները կիրակի օրերն ալ, (մինչեւ կէս օր), ինչպէս նաեւ ամէն օր, (մինչեւ կէս զիշեր) հիւանդ կ'ընդունին Բերայի գործատեղին:

Ա. Զ. Գ.



Այս անգամ կը վաճառուին մեծ ու փոքր քանակութեամբ Աղղ. Հիւանդանոցի սեպհա-կան մաքառաւ դերձաններն. հնարիչ Մեարտպոլիչի գրասենեակն օր ի Կ. Պոլիս Սուլթան Համամ Իզմիրի-Օղլու խան թիւ 10:

Այս առթիւ կը խնդրուի Արդոյ Հասարակութեան օր

փութան փորձել այս դերձաններն. Փորձառու եւ մասնագէտ անձինք հաստատած են առաւելութիւնը հրապարակի վրայ գտնուած առաջնակարգ դերձաններէն:

Փորձեցէք եւ անմիջապէս պիտի տեսնէք առաւելութիւնը:

Եւ միանգամայն օգնած պիտի ըլլաք Ս. Փրկչի Աղղ. Հիւանդանոցի հարկւրաւոր խեղճ եւ անկար պատրաստելոյ:

Բաժանորդագրութիւն [կանխիկ]

Պոլիս եւ Գաւառներ Տրկն. 50, Վեցմա 25, Եոմա 15 ղշ. Օտար երկիրներ » 12, » 6, » 3 ֆր. Դրամի տեղ բօսթայի բուլ ալ կ'ընդունուի Գաւառներէն. Թղթատարի ծախքը մեր վրայ է:

ԾԱՂԻԿԻ Խմբագրութեան եւ Վարչութեան վերաբերեալ ամէն գրութիւնք պէտք է ուղղուին Առ

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՕԲՄԷՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ ԾԱՂԻԿ ԽԱՐԱԾԵՐԹԻ

Ղալաթիա, Նորատունկեան խան

Արտոնատէր Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՊԻՊԷՐԵԱՆ

Ձիւմպիլիլի խան միջնայարկ Թիւ 18